


ԳԱՂՈՆՔՆ

ՈՒ

ՍՊԱՍԱՎՈՐԸ

891.7Ար.
Գ-24

ՀԱՅՄԵՏՆԻՍ 1940



Ճաշից հետո սահմանապահ մարտիկ Լևչենկոն շինելի վրայից սպիտակ բալախոն հագավ, հրացանն ստուգեց ու գնաց սահմանը՝ դետքի։ Որն արևոտ էր, սառնամանիքոտ, ձյունը ճոճոտում էր նրա վոտներին տակ, և մարտիկ Լևչենկոն յերազում էր այն մասին, թե ինչպես կբռնի լրտես-թշնամուն, կբերի ուղեկալ, պետի մոտ և ինչպես մյուս բոլոր մարտիկ-սահմանապահները կասեն։

— Կեցցես, Լևչենկո, թեև յերիտասարդ սահմանապահ ես, բայց համարձակ ես։ Մի տեսեք ինչ քեռի յե բռնել։

Լևչենկոյի ծոցում մի աղավթի կար, անունը՝ «Գաղոնք»։ Քայլելիս նա աղավթին հանեց և կերակրեց հացի մանրուքով։

— Այ, յեղբայր Գաղոնք, — ասաց Լևչենկոն, — քեզ հետ միասին անպատճառ մի լրտես ենք բռնելու։ Մյուսները բռնում են, իսկ մենք չե։ Հը՞։ Դեհ, մտիր ծոցս, կմրսես, ցուրտ ե։

Յեվ մարտիկ Լևչենկոն կանգ առավ յեղյամով ծածկված մի մեծ ծառի մոտ, և սուր հայացքով սկսեց դիտել երևանալիս։ Շրջապատում

ամեն ինչ սպիտակ էր ու մաքուր։ Ինքը, մարտիկ Լևչենկոն, վոր սպիտակ բալախոն էր հագել, նույնպես ձյունի պես սպիտակ էր. թշնամին բոլորովին չէր կարող նկատել նրան։

ԹՇՆԱՄԻՆ

Հանկարծ Լևչենկոն ձյան ճոճոտց լսեց։ Թշնամի՞ յե։ Վո՞չ, առաջվա պես շրջապատում ամեն ինչ սպիտակ է։ Բայց, գուցե, թշնամին էլ նույնպիսի բալախոն է հագել, ինչպես Լևչենկոն։

Լևչենկոն ուշադիր շուրջը նայեց և հրացանն արագ ցած առավ։ Լևչենկոյի նման սպիտակ բալախոն հագած մի մարդ գգուշ քայլերով գալիս էր ուղիղ դեպի այն ծառը, վորի յետևը Լևչենկոն էր թագնված։ Մի սև շուն էլ հետևում էր նրան։

— Կանգնիր, — գոչեց Լևչենկոն։

Նույն վայրկյանին լավեց յերկու կրակոց։ Առաջինը կրակեց թշնամին, յերկրորդը՝ Լևչենկոն։

Կրակելուց հետո թշնամին փախավ, իսկ Լևչենկոն տնքաց և կողքի վրա ընկավ։ Թշնամու գնդակը ծակել էր Լևչենկոյի վոտը։

Սակայն վիրավորված ժամանակ էլ Լևչենկոն իրեն չկորցրեց։ Ձյան վրա պառկած, նա նորից կրակեց փախչող թշնամու վրա։ Յեվ թշնամին ընկավ։ Այն ժամանակ Լևչենկոն մտածեց, վոր թշնամուն սպանել է կամ վիրավորել և դադարեց կրակելուց։ Նա հանեց մատիտն ու ծոցատետրը և մի տոմս գրեց. «Հրացանազարկ արի սահմանը խախտողին։ Վիրավորված եմ։ Հարկավոր է ոգնություն։ Լևչենկո»։

Հետո ծոցից հանեց աղավթուն և ասաց.

— Դեհ, Գաղոնք ջան, վոտիդ տոմս եմ կապում։



Թռիր մեր սահմանային ուղեկալը: Այնտեղ տոմար
կկարդան և կոգնեն ինձ: Դեհ, արագ Թռիր, սիրելիս:
Թե չե, ո՞վ գիտե, գուցե մեռնեմ:

Խնամիկ, աղափսի Գաղոնքը վոչինչ չհասկացավ
մարտիկ Լևչենկոյի ասածներից: Նա պարզապես
պիտի թռչեր ուղեկալի աղափսատունը, իսկ այնտեղ
արդեն հերթապահը կգտներ տոմար: Բայց այնպես
պատահեց, վոր Գաղոնքը չկարողացավ թռչել:

Թշնամին վոչ վիրավորված եր և վոչ ել սպան-
ված. նա միայն վիրավոր եր ձևացել: Յեվ հենց
վոր Լևչենկոյի ձեռքին աղափսի տեսավ՝ կրակեց:
Գնդակը սպանեց Գաղոնքին և ծակեց մարտիկ
Լևչենկոյի ձեռքը:

Իսկ թշնամին վեր թռավ և սկսեց փախչել:

Լևչենկոն ուզում եր փախչող թշնամու յետևից
կրակել, բայց չկարողացավ: Ուզեց սողալ, այդ ել
չհաջողվեց: Այն ժամանակ նա ձյուն լիզեց, նայեց
սպանված աղափսուն և ասաց. — Ա՛խ, Գաղոնք...

Ուրիշ վոչինչ չխոսեց: Նա պառկած մտածում
եր, վոր հիմա թշնամին կմտնի Խորհրդային Միու-
թյուն և դրանում մեղավոր կլինի սահմանապահ-
մարտիկ Լևչենկոն: Նա կրկին ձյուն լիզեց և ցա-
վից տնքալով, հանեց բամբակն ու վիրակապը:
Առաջ կապեց վիրավորված ձեռքը, հետո վտար:

Նա աղափսուն զրպանը դրեց և սկսեց սողալ:
Սողում եր, յետևից քաշ տալով հրացանը: Սողալը
սաստիկ ցավ եր պատճառում մարտիկ Լևչենկոյին,
այնպիսի ցավ, վոր յերբեմն աչքերն արտա-
փակալում եյին, բայց նա սողում եր ու սողում:
Յերբեմն սողում եր վորի, յերբեմն ել կողքի վրա:
Յեվ ամբողջ ժամանակ մտածում եր, վոր յեթե
մինչև ուղեկալը սողալ չկարողանամ, թշնամուն
չեն բռնի:



— Վոչինչ,— փնթփնթում եր նա, ատամներն
իրար սեղմելով,— կբռնենք... Ձեռ փախչի:

Բայց ել սողալ չկարողացավ:

Այն ժամանակ նա հրացանը դրեց ձյան վրա
և ձախ ձեռքով, առանց նշան բռնելու, կրակեց:
Գուցե ուղեկալում կրակոցի ձայնը լսեն:

ՍՊԱՍԱՎՈՐԸ.

Սահմանապահ Սպասավորը շունն այդ ժամա-
նակ իր ընթրիքը վերջացնելու վրա յեր: Ընթրիքը
շատ համեղ եր, բայց կրակոցի ձայնը լսելով, ել
չկերավ, ականջները ցցեց և վնգստաց: Սահմանա-
պահ-մարտիկները կրակոցի ձայնը չլսեցին. շունը
մարդուց շատ ավելի լավ ե լսում: Սպասավորը
մի անգամ ել վնգստաց, ողը հոտոտեց և վազեց:
Ող ներշնչելով, նա արագ վազեց մարտիկ Լևչեն-
կոյի թաղիքե վոտնամանի հետքերով: Լևչենկոն
շատ անգամ եր Սպասավորին իր հետ դետքի տա-
րել և ուտելու համար շատ համեղ բաներ եր տվել:
Սպասավորը շատ լավ գիտեր, թե մարտիկ Լևչեն-
կոյից ինչի հոտ ե գալիս:

Նորերս նա իր թաղիքե վոտնամանի տակ կա-
շի յեր կարել. հետքից կաշվի հոտ եր գալիս:

Հանկարծ Սպասավորը տեսավ Լևչենկոյին:

Նա կանգնած չեր հրացանը ձեռքին, ինչպես
սովորաբար, այլ պառկած եր, դեմքը փխրուն
ձյունի մեջ խրած: Հրացանն ել ընկած եր կողքին:
Ի՞նչ ե պատահել:

Սպասավորը պոչը շարժեց և լիզեց սահմա-
նապահ Լևչենկոյի ականջը:

Մարտիկ Լևչենկոն պառկած եր անշարժ:

Սպասավորը մի անգամ ել լիզեց նրա դեմքը:
Լևչենկոն աչքերը բաց արավ ու ասաց, «Սպասավոր»:



Լեւնեկին շոյեց նրան իր առողջ ձեռքով և ասաց.
— Սպասավոր, վազիր ուղեկալը. ատամներովդ

բռնիր աղափնուն: Տար նրան ուղեկալ: Դէ, շոտ:
Դէ, վերցրու:

Շունը կարողանում էր ատամներով բռնած տա-
նել այն ամենը, ինչ տալիս էյին սահմանապահ-
ները: Նա վերցրեց սպանված աղափնուն, բայց
չգնաց:— Կորիր,— ասաց Լեւնեկին,— վազիր:

Յեւ գիտամբ այնպիսի տեսք ընդունեց, վոր
իբր թե շատ է բարկանում: Սպասավորը վերավոր-
վեց, պոչն իրան քաշեց ու վազեց:

ՈՏԱՐ ՇՈՒՆԸ

Ուղեկալի ճանապարհին Սպասավորն ողի մեջ
ոտար շան հոտ գգաց:

«Սա Ազորը չէ, — մտածեց նա, — Ազորը խոհա-
նոցում իրեն այրել է և նրանից խանձված բրդի
հոտ է գալիս: Միլկան ել չէ, Միլկայից ձկան հոտ
է գալիս»:

Շունը շատ լավ գիտեր, թե շրջակայքի բոլոր
շներն ինչ հոտ ունեն, բայց այս հոտը նրան ան-
ծանոթ էր:

Աղափնին ատամներով բռնած, հետաքրքիր
Սպասավորը վազեց ոտար շան հետքով:

Հանկարծ շունը քարացած կանգ առավ:

Թփերի յեռակից ժանիքները ցցած, մոնչալով
նրա վրա մի ահագին սև շուն հարձակվեց:

Դա թշնամու շուն էր, ոտար, Սպասավորին
անծանոթ շուն, պոչը բարակ, ափանջները կարճ:
Մի զգվելի, գարշելի շուն:

Սպասավորն զգուշությամբ սպանված աղափ-
նուն ձյան վրա դրեց և նույնպես ժանիքները ցը-
ցեց:— Ատո՛ւ, — հրամայեց թշնամին թփերի հետևից:

Յեւ սև շունը հարձակվեց Սպասավորի վրա:

Բայց Սպասավորը մի կողմ ցատկեց, և սև
շան քիթը խրվեց ձյան մեջ:



Իսկ թշնամին չսպասեց, փոր իմանա, թե ինչով կվերջանա ղների կռիվը: Նա արագ անցավ անառով և թաքնվեց թավուտում:

Շները յերկար ժամանակ կռվում եյին: Սեն ավելի ուժեղ էր, խոշոր և ծանր, բայց Սպասավորը շատ ավելի ճկուն էր: Յեվ սև շունն ավելի շուտ հոգնեց, բան Սպասավորը:

Սպասավորն ատամներով բռնեց նրա կոկորդից ու ծնոտները սեղմեց:

Սևը ձգվեց, փորձեց իր վրայից ցած նետել Սպասավորին, բայց Սպասավորը ծակեց նրա կոկորդը: Յեվ շունը սատկեց:

Սպասավորը վերցրեց աղափնուն ու վազեց դեպի ուղեկալը:

Սև շունը շատ վերքեր էր հասցրել նրան, բայց նա ցավ չէր զգում, միայն բարկանում էր: Շուտով նա աղափնուն բերեց ուղեկալ, պետի մոտ:

— Սա ի՞նչ բան է, — հարցրեց պետը: — Սպասավորը բերել է սպանված Գաղոնքին:

Պետը տոմսը կարդաց, թուով ձիու վրա և հրամայեց. — Հետևել ինձ:

Ջիավոր սահմանապահները սլացան իրենց պետի հետևից, իսկ պետի առջևից սլանում էր Սպասավորը: Շունը կարծում էր, թե բոլորը գնում են տեսնելու իր հոշոտած շանը և առաջնորդեց նրան դեպի սև շան դիակը:

— Այ քեզ բան, — ասաց պետը, — իսկ փորտե՞ղ է մեր ընկեր Լեչենկոն. — Ահա նրա հետքերը, — ասաց մյուս սահմանապահը:

Հանկարծ սպասավորը վզկապը ձգեց ու սլացավ հետքերով, իսկ ձիավորները գնացին նրա հետևից:

— Վոչ, — ասաց պետը, — սա Լեչենկոյի հետքերը չեն, նա թաղիքի փոտնամաններ է հագնում, իսկ սա կոշիկների հետքեր են: Սա թշնամի յե:

Անսպասելի կերպով հետքերը վերջացան:

Սպասավորը կանգ առավ սոճու տակ ու կատաղած հաջեց: Ուղեկալի պետը վերև նայեց և

տեսավ, վոր սոճու ճյուղերի արանքում թաքնված
է մի մարդ, ամբողջովին սպիտակ հագած:

— Իջեք, — հրամայեց պետը: Ձեզ հիմար մի
ձևացրեք: Լրտեսը ծառից ցած իջավ և ձեռները
բարձրացրեց:

Յերկու մարտիկ լրտեսին տարան ուղեկալ,
իսկ պետը, մյուս մարտիկներն ու Սպասավորը
գնացին վիրավորված Լևչենկոյին վորոնելու:

Լևչենկոն առաջիկա պես ձյան վրա պառկած էր:
Տեսնելով պետին ու ընկերներին, նա ասաց.

— Յես թշնամուն ձեռքիցս բաց թողի: Ա՛խ:

— Ամեն ինչ կարգին է, ընկեր Լևչենկո, — ասաց
ուղեկալի պետը: — Դուք հերոսաբար եք վար-
վել: Թշնամին արդեն բռնված է:



Յեվ սահմանապահները Լևչենկոյին նստեցրին
ձիու վրա:





ՅԵՐԵՔ ԲԱՐԵԿԱՄ

Գարնանամուտին մարտիկ Լեչենկոն բոլորովին առողջացավ: Նա ձեռք բերեց նոր աղափնի, վորին նույնպես Գաղոնք անվանեց:

Լեչենկոն, Գաղոնքն ու Սպասավորը հիանալի բարեկամներ են: Այժմ Սպասավորը, յերբեմն, առաջնորդ բռնած ման է ածում Գաղոնքին: Յեվ այդ բանը նրան շատ է դուր գալիս: Բայց ամենից շատ աղափնուն դուր է գալիս Լեչենկոյի ուսին նստելը: Սպասավորին ել ամենից շատ դուր է գալիս նստել իր տիրոջ կողքին:



ՀՀ Ազգային գրադարան



NL0387311

Ահա այս զիրքով ել նրանց նկարել է նկարիչը:

2495

40

ԳԻՆԸ 1 Ռ. 30 Կ.

Ֆեֆաս՝ քս ՅՈՒ. ԳԵՐՄԱՆԻ

Նկարներ՝
Գ. Շ ե վ յ ա կ ո վ ի
Թարգմանեց՝
Ն. Գ ե ռ ա ս ի մ յ ա Ն
Պատ-խմբագիր՝
Հ. Հ ա յ ռ ա պ ե ս յ ա Ն
Տեխ-խմբագիր՝
Ա. Ն. Գ ա ս պ ա ռ յ ա Ն
Լիսոգրաֆ. Գկարիչ՝
Ս. Գ ա ս պ ա ռ յ ա Ն
Սրբագրիչ՝
Մ. Թ ու մ ա ճ յ ա Ն

Դրավիտի լիազոր՝ Բ—1157. Հրատ. 5211.

Պատվեր 307. Տիրած 3000

Հանձնված է արտադրության 2/IV—40

Ստորագրված է տպագրության 7/VI—40 Բ.

Հայպետհրատի տպարան, Յերեկան, Լենինի 65

СЕКРЕТ-
И
СЛУЖБА

Текст по Ю. GERMANU
Гиз Арм. ССР, Ереван, 1940 г.